

ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ
ՄԻՋԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՏԻԵՋԵՐԱԿԱՆ ՕԺԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ
ՀԱՄԱԳՈՒՄԱՐ ԿԻՊՐՈՍՈՒՄ

1986 թ. նոյեմբերի 17—26 օրերին Կիպրոսի Լաոնաքա քաղաքում կայացավ Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի միջեկեղեցական տիեզերական օժանդակության համագումար: Համագումարին մասնակցում էին 102 երկրներից հրավիրված 300-ից ավելի կրոնական գործիչներ, մամուլի անդամներ, բազմաթիվ հյուրեր:

Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի Միջեկեղեցական Տիեզերական Հանձնախմբի հրավերով և Ամենայն Հայոց Հայրապետի համաձայնությամբ սույն ժողովին իր գործոն մասնակցությունը բերեց նաև Իրաքի հայոց թեմի առաջնորդ գերաշնորհ Ս. Ավագ եպս. Սաստուրյանը:

Համագումարի նշանաբանն էր՝ «Կոչ՝ հարևանությունը ապրելու»:

Նոյեմբերի 18-ին համագումարի բացումը կատարեց հյուրընկալ Կիպրոսի հոգևոր պետ, Նորին Ամենապատվություն Խրիստոստոմոս արքեպիսկոպոսը: Բացման արարողությանը հաջորդեց ՄԱԿ-ի ընդհանուր քարտուղարի օգնականի՝ դոկտոր Ադեապետ Էդեդիսի ուղերձը՝ «Դեպի երկրորդ հազարամյակի արշալույսը և 21-րդ դարի սկզբնավորությունը» խորագրով: Այս ուղերձում քննարկված հարցերին անդրադարձան ժողովի ևս երկու մասնակիցներ:

Հաջորդ օրը համագումարն ունկնդրեց դոկտոր Վիթթորիո Արաեսի ուղերձը՝ «Բարի սամարացու ծառայությունը. կյանքը ինչպես ապրելու մի ընտրություն» թեմայով, ուր բանախոսը անդամներին Եկեղեցիների որդեգրելիք Աստվածաբանական պատասխանը՝ աշխարհի այժմյան կացության և հետագա զարգացման վերաբերյալ:

Երեքօրյա խորհրդակցությունից հետո 27

խմբերի բաժանված պատգամավորները անդամներին իրենց առաջարկներն ու կարծիքները, որոնց համադրմամբ և կազմվեց համագումարի օրակարգը: Օրակարգի ճշտումից հետո պատգամավորները՝ դարձյալ ժողովի նստելով, քննարկեցին արծարծված խնդիրները և անդամներին վերջնական զեկուցագրեր, ջանացին սահմանել քրիստոնեական ծառայության բրնայթն ու տարողությունը, ինչպես նաև նոր միջոցներ որոնել՝ ծառայությունը դարձնելու ավելի անմիջական, արդյունավետ և հանրօգուտ:

Հայ Եկեղեցու անդամներին Ս. Ավագ Սրբազանը Համագումարի Ընդհանուր Ախտի կողմից ընտրվեց որպես անդամ թե՛ ժողովի գործարար հանձնախմբի և թե՛ եզրափակիչ հայտարարության հանձնախմբի: Սույն հայտարարության, որ կոչվեց Լաոնաքայի հայտարարություն, 5-րդ հոդվածի մեջ ընդգծվեց հետևյալը.

«...Իրաքա-Իրանյան պատերազմը ազդարարում է մեզ՝ բոլոր զոհերի Ակտմամբ կարեկցություն արտահայտելու նոր կերպեր զարգացնել, ինչպես նաև պահանջում է մեզանից՝ դիմելու պետական ուժերին, որոնք զենքերի վաճառումով այս պատերազմն են սնուցանում, ուշացնելով վայրագությունների լուծումը: Սույն վիճակը նույնպես պահանջում է մեզանից քաջալերելու բոլոր նրանց, որոնք նախաձեռնողներ են եղել խաղաղության ի նպաստ: Հայկական Յեղասպանությունը, մեր դարի առաջիններից մեկը, պետք չէ մոռացվի և պիտի ճանաչում գտնի աշխարհի կողմից...»:

1986 թ. նոյեմբերի 28-ին համագումարն ավարտեց իր աշխատանքները: